ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ ՋԱՀՈՒԿՅԱՆԻ 80-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2000 թ. հոկտեմբերի 17–19-ին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Նիստերի դահլիճում տեղի ունեցավ ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանի 80-ամյակին նվիրված հայերենագիտական միջազգային գիտաժողով: Գիտաժողովին իրենց մասնակցությունն էին բերել ոչ միայն հայաստանյան, այլև արտասահմանյան բազում գիտնականներ:

Գիտաժողովը ներածական խոսքով բացեց ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ, ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը: Լեզվաբանության որևէ ասպարեզ չկա, ասաց նա, որում իր վճռական, ծանրակշիռ խոսքն ասած չլինի Գևորգ Ջահուկյանը՝ ընդհանուր և համեմատական լեզվաբանություն, հայոց լեզվի պատմություն, ժամանակակից հայոց լեզվի հիմնահարցեր, բարբառագիտություն և այլն: Ներկայացնելով Գ. Ջահուկյանի գիտական մեծ ավանդը, Վ. Բարխուդարյանը նշեց, որ 1960-1962 թթ. հրատարակվեց լեզվաբանի երկհատոր աշխատությունը՝ «Լեզվաբանության պատմություն», որն ընդգրկում է լեզվաբանության ուղղությունների պատմությունը հին շրջանից մինչև մեր օրերը: Այնուհետև հայ անվանի լեզվաբանն անդրադարձել է հնդեվրոպական լեզուներին, հայոց լեզվի պատմությանը, ուսումնասիրել է սեպագիր լեզուների և հայերենի առնչությունները, մի քանի աշխատություններ է նվիրել նախագրային շրջանին, ցույց տվել հայոց լեզվի զարգացման փուլերը: Նա նոր խոսք ասաց նաև հայ բարբառների ուսումնասիրության ասպարեզում, դարձավ վիճակագրական բարբառագիտության մեթոդի հիմնադիրը, դասակարգեց հայերենի բարբառները: Վ. Բարխուդարյանը ներկայացրեց նաև Գ. Ջահուկյանի գիտամանկավարժական աշխատանքը. 1945 թ. մինչ օրս դասախոսում է Երևանի պետական համալսարանում, 22 տարի եղել է ամբիոնի վարիչ: 1962 թ. ղեկավարում է ՀՀ ԳԱԱ Լեզվի ինստիտուտը, մասնակցում է նաև Լեզվի պետական տեսչության, Լեզվի բարձրագույն խորհրդի (նախկին տերմինաբանական կոմիտեի) աշխատանքներին (խորհրդի նախագահն է):

Լիագումար նիստում, որ նախագահում էր ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը, լսվեցին մի շարք զեկուցումներ: Ակադեմիկոս Սերգեյ Աբրահամյանը (ԳԱԱ Լեզվի ինստիտուտ, Հայաստան) զեկուցեց «Լեզվական և ոճական նորմերի և նրանց փոխհարաբերության մասին», Ջանկարլո Բոլոնիեզին (ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, Միլանի կաթոլիկ համալսարան, Իտալիա)՝ «Իրանական նոր փոխառություններն ու պատճենումներն հայերենում» թեմաներով: Դոկտոր Լևոն Զեքիյանը (ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, Վենետիկի Կաֆոսկարի համալսարան, Իտալիա) անդրադարձավ պատմական և տարածքային տեսանկյուններից արդի հայերենի արևելյան և արևմտյան տարբերակներին: «Հայ բարբառների հարաբերական ժամանակագրության մասին» և «Պատմականից դեպի էվոլյուցիոն լեզվաբանություն» թեմաներով զեկուցումներ կարդացին դոկտոր Ջոզեֆ Վայթենբերգը (Հայագիտական ուսումնասիրությունների մի-

ազգային ընկերակցության պատասխանատու քարտուղար, Լայդենի համալսարան, Նիդերլանդներ) և դոկտոր Բերնարդ Բիչակջյանը (Նիյմեգենի համալսարան, Նիդերլանդներ):

Լիագումար նիստից հետո դիտաժողովն իր աշխատանքները շարունակեց տարբեր բաժանմունքներում:

«Ժամանակակից հայոց լեզվի բաժանմունքում» (նիստի նախագահ ակադեմիկոս Սերգեյ Արբահամյան) լսվեցին հետևյալ զեկուցումները. Անահիտ Տոնապետյան-Դեմոպուլոսի (Արևելյան լեզուների և մշակույթների ազգային ինստիտուտ, Ֆրանսիա) թեման էր «Գևորգ Ջահուկյանի համընդհանուր լեզվաբանական կաղապարը և ժամանակակից լեզվաբանությունը», Ռոբեր Տեր-Մերկերյանինը (Պրովանսի համալսարան, Ֆրանսիա) «Աշխարհաբարի երկու տարբերակների կիրառական ոլորտները», Սիլվիա Կասպարյանինը (Մոնկտոնի համալսարան, Կանադա)՝ «Հայերենի խոսակցական լեզուն և լեզուների շփումները», Նվեր Սարգսյանինը (ԳԱԱ լեզվի ինստիտուտ, Հայաստան) «Իրադրության դրսևորումները առօրյա խոսքում», Հովհաննես Զաքարյանինը (Լեզվի պետական տեսչություն, Հայաստան)՝ «Կողմնակի ենթակայի և ուղիղ խնդրի արտահայտությունը արդի հայերենում», Անահիտ Գալստյանինը (ԳԱԱ լեզվի ինստիտուտ, Հայաստան)՝ «Մանկական խոսքի բառապաշարի մի քանի առանձնահատկություններ», Գայանե Գրիգորյանինը (ԳԱԱ Լեզվի ինստիտուտ, Հայաստան) «Ձայնավորի տեղության և ուժգնության փոփոխությունները տրամաբանական շեշտի առկայության դեպքում» և Սիլվա Պապիկյանինը (ԳԱԱ Լեզվի ինստիտուտ, Հայաստան)՝ «Փոխառությունները հայերենի տնտեսագիտական տերմինահամակարգում»:

«Հայոց լեզվի պատմության բաժանմունքում» (նիստի նախագահ՝ ակադեմիկոս Ջանկարլո Բոլոնիեզի) զեկուցումներով հանդես եկան Լավրենտի Բարսեղյանը (ԳԱԱ հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Հայաստան) «Գևորգ Ջահուկյանը և հայ ժողովրդի ծագման հիմնահարցերը» թեմայով, Ալեսանդրո Օրենդոն (Հետազոտությունների Պիզայի համալսարան, Իտալիա)՝ «Ոսկան Երևանցու քերականությունը և նրա լատինական աղբյուրը», Անյես Ուզունյանը (Արևելյան լեզուների և մշակույթների ազգային ինստիտուտ, Ֆրանսիա)՝ «Վաղակատար ներկան դասական հայերենում», Լիլիթ Բրուտյանը (ԵՊՀ, Հայաստան)՝ «Դավիթ Անհաղթի լեզվաբանական հայացքները», Գոհար Մուրադյանը (Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Հայաստան)՝ «Դասական և հունական թարգմանությունների բաղդատության փորձ», Աշոտ Մարությանը (Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Հայաստան)՝ «Հայոց լեզվի պատմության հարցերը Գևորգ Ջահուկյանի աշխատություններում», Ներսես Մկրտչյանը (Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Հայաստան)՝ «Պամիրյան լեզուները և հայերենը», Մելադա Ազարեկյանը (ԳԱԱ Լեզվի ինստիտուտ, Հայաստան)՝ «Նախասլատմական շրջանի հայերենի հնչյունական օրենքների ժամանակագրության հարցեր» և Նադիկ Հովհաննիսյանը (ԳԱԱ Լեզվի ինստիտուտ, Հայաստան)՝ «Նորակազմ բառեր հոմանիշների միջինհայերենյան ձեռագիր բառարաններում»:

«Հայ բարբառագիտության բաժանմունքում» (Նիստի նախագահ՝ դոկտոր Ջոզեֆ Վայթենբերգ) Դարիկո Կոստանգյանը (ԳԱԱ Լեզվի ինստիտուտ, Հայաստան) հանդես եկավ «Գևորգ Ջահուկյանի բարբառագիտական հայացքները» զեկուցումով. Անահիտ Հանեյանը (ԳԱԱ լեզվի ինստիտուտ, Հայաստան)՝ «Հայ բարբառներում «ծիածան» հասկացության բառազուգաբանությունների հոգևոր մշակութային արժեքը» թեմայով. Գայանե Գևորգյանը (ԳԱԱ Լեզվի ինստիտուտ, Հայաստան)՝ «Անցյալ կատարյալի ձևաիմաստային դրսևորումները հայերենի տարածքային տարբերակներում» զեկուցումով, Ջեմմա Բառնասյանը (ԳԱԱ Լեզվի ինստիտուտ, Հայաստան)՝ «Հայերենի բարբառներում «ժամանակ» հասկացության բառանվան գործառական-ծագումնաբանական քննություն» և Հասմիկ Խաչատրյանը (ԳԱԱ Լեզվի ինստիտուտ, Հայաստան)՝ «Արու զավակ» բառանվանման զուգաբանությունները հայերենի բարբառներում» թեմաներով:

«Ընդհանուր լեզվաբանության բաժանմունքում» (Նիստի նախագահ դոկտոր Բերնարդ Բիչակջյան) Գայանե Հովհաննիսյանի (ԵՊՀ, Հայաստան) զեկուցումը նվիրված էր Գևորդ Ջահուկյանի աշխատություններում ճանաչողական գիտակարգի զարգացման նախադրյալներին, Ռոբերտ Ուռուտյանը (ԳԱԱ Լեզվի ինստիտուտ, Հայաստան) հանդես եկավ «Ժամանակի լեզվաբանական հայեցակետը» թեմայով, Արուսյակ Գևորգյանի և Հասմիկ Ղազարյանի (ԵՊՀ, Հայաստան) զեկուցման թեման էր «Գունային խորհրդանիշ
երի արտացոլումը լեզվում», Ա. Խաչիկյանինը (ԵՊՀ, Հայաստան)՝ «Մոսկվայի դպրոցի հայեցակետի արդյունավետությունը երկու լեզուների հնչութային համակարգերի զուգադրական ուսումնասիրության ժամանակ» և Արմեն Այվազյանինը (Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Հայաստան)՝ «Ազգային լեզվի սլաշտամունքը և հայկական, անգլիական, ֆրանսիական ու ռուսական ազգայնականության սկզբնավորման ժամանակը»:

Գիտաժողովի բաժանմունքների աշխատանքների ավարտից հետո դրանց արդյունքներն ամփոփվեցին Նիստերի նախագահների կողմից (Նիստի նախագահ ակադեմիկոս Աերգեյ Աբրահամյան):

Գիտական նստաշրջանի վերջում փակման խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ, ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ